ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հուլիսի 2020 թվականի N 271-Ա

Տ. ԲԱԿԼԱՋՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման հավելվածի 34-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի Հ. Թումանյանի անվան N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2020 թվականի հուլիսի 10-ի N 4 արձանագրությունը *(որոշումը)* **որոշում եմ.**

1. ***Տիգրան Գագիկի Բակլաչյանին*** 2020 թվականի հուլիսի 20-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի Հ. Թումանյանի անվան N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ *նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով*:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2020 թվականի փետրվարի 19-ի *«Տ. Բակլաչյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին»* N 54-Ա որոշման 2-րդ կետը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի Հ. Թումանյանի անվան N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թվականի հուլիսի 20
ք. Հրազդան